զարգացմանը մեծապես նպաստում է ֆրանսիացի արևելագետ - հայագետ ժան - Պիեռ Մահեն: Արևելյան կենդանի լեզուների դպրոցում երկար տարիներ եղել է հայագիտության ամբիոնի վարիչ: 1977-ից՝ «Ուշու դեզ էթյուդ արմենիեն» հայագիտական հանդեսի գլխավոր խմբագիր: Զբաղվում է հայերեն հին ձեռագրերի գրաբարից ֆրանսերեն թարգմանությամբ, միջնադարյան Հայաստանի պատմության, հայ գրականության հարցերով: 1798-ին Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցում (Արևելյան լեզուների և քաղաքակրթության ազգային հիմնարկ, ԻՆԱԼԳՈ) հիմնվել են հայերենի դասընթացներ, իսկ 1810-ին՝ հայագիտության ամբիոն, որի վարիչներն են եղել Շահան-Հակոբ Ջրայետյանը (1810-27), Լուվայան դը Ֆլորիվալը (1827-62), Էդուարդ Դյուլորիեն (1862-81), Օգյուստ Կարիերը (1881- 1902), Անտուան Մեյեն (1902-06), Ֆրեդերիկ Մակլերը (1906-37), Ժորժ Դյունեզիլը (1937-49), Ֆրեդերիկ Ֆեյդին (1947-77), ժան-Պիեռ Մահեն (1977-88), Տիգրան Գուլումջյանը (1988- 91), 1991 - ից՝ Անահիտ Տոնապետյանը: Ներկայումս (2003) դասավանդվում արևելահայերեն և արևմտահայերեն, գրաբար, հայոց պատմություն, գրականություն, թարգմանություն, արվեստի պատմություն, ազգագրություն: 1997-ին ուսանողների թիվը՝ 55: Կան նաև ազատ ուսնկնդիրներ:

Տարբեր տարիների Ֆ-ում հիմնվել են հայագիտական հաստատություններ: Հայագիտական ծրագրեր կան նաև Ֆ-ի մի շարք համալսարաններում և բարձրագույն դպրոցներում:

Հայկական ուսմանը ընկերություն, կազմակերպվել է 1920-ին: Հիմնադիրներ՝ Վիկտոր Բերար, Լև Լակրուան, Ֆրեդերիկ Մակլեր, Անտուան Մեյեն և ուրիշներ: Նպատակն էր համախմբել Ֆ-ի հայագետներին, նպաստել հայագիտության զարգացմանը: 1993-ից նույն անունով գործում է Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթության ազգային հիմնարկի (ԻՆԱԼԳՈ) կազմում: Նախագահ՝ Անահիտ Տոնապետյան, քարտու-



они важны для нас как иллюстрация любви армян к книге.

Приведем несколько отрывков из этих записей:

*«...берегите написанное мною, во времена бегства и в години войн увозите книгу эту в город и скройте ее, в мирное же время верните книгу в монастырь и читайте ее: и не прячьте, не держите закрытой, ибо закрытые книги – всего лишь идолы».*

*«...и если увидите эту рукопись, прочтете или перепишите ее, храните с бережностью и держите платом, и не дерзайте отрезать лист или соскоблить памятную запись и вписать другое имя».*

*«...Купил святое Евангелие и принес его в церковь святого Георгия, но не на долгое время, а читать, если же кто дерзнет из родственников моих, или из священников села, или из другого места пришедший, продать или украсть Евангелие, да будет отвергнут отцами церкви и станет жертвой неверных».*

Но вернемся к истории Матенадарана.

Уже в V веке Эчмиадзин потерял свое привилегированное положение: в 484 году престол католикоса был перенесен в Двин, что сказалось и на состоянии книгохранилища. В условиях непрекращающихся нашествий оно приходит в запустение, в котором находится до 1441 года, когда резиденция католикоса вновь была водворена в Эчмиадзин. После этого появляется потребность пополнить собрание Матенадарана. Однако, в течение последующих веков, вплоть до начала Эчмиадзин подвергался разбою и грабёжам. Были разграблены не только его материальные ценности, но и армянские рукописи. На площадях Тебриза «тюками и тысячами» продавались армянские манускрипты со штампом Эчмиадзинского книгохранилища. Приходилось прятать рукописи и от ереванского сардара (наместника персидского шаха в Армении), дабы не разжечь его корыстолюбие.

В эти века собрание Матенадарана больше походило на склад, чем на библиотеку: книги были сложены в подвалах в сундуках. И только в первой половине XIX века, после присоединения части Восточной Армении

к России, появилась возможность поместить их в специальные шкафы, систематизировать и составить каталоги. В начале XX века в коллекции Эчмиадзинского патриархата насчитывалось 4660 рукописей.

В декабре 1920 года правительство Советской Армении издало декрет о национализации Эчмиадзинского книгохранилища. В 1939 году Матенадаран переводят в Ереван, а еще через двадцать лет его перемещают в специально построенное здание, с описания которого мы и начали наш рассказ.

С 1959 года началась новая страница в истории Матенадарана. С этого времени он стал не только хранилищем и музеем, но и научно-исследовательским институтом, где над древними рукописями работают ученые различных специальностей: историки и философы, филологи и искусствоведы, врачи и химики. Матенадаран постепенно открывает свои тайны. Переводятся с древнеармянского сочинения средневековых авторов, издаются альбомы с образцами замечательной армянской миниатюры.

Большое внимание уделяется в Матенадаране и хранению рукописей. Реставраторы восстанавливают обветшалые переплеты и «лечат» пергаментные листы. Художники-копиисты делают документальные копии с ценнейших образцов живописи: эти дубликаты заменяют в необходимых случаях драгоценные оригиналы. Даже в тяжелейшие для Армении 1992 – 1995 годы, когда республика находилась в жесточайшей блокаде, в Матенадаране не отключали электричество (наряду с больницами, хлебозаводами и т.п.), чтобы обеспечить необходимый режим хранения нашего бесценного прошлого. Разве что за это можно сказать спасибо первому президенту Армении, свершившему над своим народом чудовищное преступление...

Слава Богу, те дни уже в прошлом. Коллекция Матенадарана продолжает обогащаться и в наши дни приобретениями и пожертвованиями армян, в основном зарубежных, которые присылают и привозят в Ереван манускрипты, хранимые веками как драгоценные реликвии, ибо в Матенадаране видят они ту конечную пристань,

где после многовековых бурь и страстей должна найти окончательное пристанище армянская рукопись.

Матенадаран является свидетелем того, как очень точно отметил в свое время академик Н.Я. Марр, как «горсть народа отстаивает в определенных, строго очерченных пределах территории свою культурную самостоятельность, отстаивает ее в прямой или косвенной борьбе с величайшими державами мира. Эти мировые державы – ассирийская, ахеменидо-персидская с мидянами, греко-македонская, парфяно-персидская, сасанидско-персидская, арабская, византийская. Все они по очереди одна за другой сходят в могилу, но горсть народа продолжает отстаивать свою культурную самостоятельность. Она, эта горсть народа, в непрерывной борьбе теряет государственность и снова ее восстанавливает... И все таки она, эта горсть, уже горсточка народа, с ослабленным усердием отстаивает свою культурную самостоятельность. И речь идет именно о борьбе за заветные, с незапамятных времен наследованные культурные ценности...»

*Материал подготовила  
Е. Севумян*



# ՖՐԱՆՍԻԱ

Продолжение. Начало в № 3 - 2005 г.

## ԵԿԵՂԵՑԻ

Հայաստանյազ առաքելական եկեղեցու Ֆ-ի հայ կրոնական համայնքները միավորված են, հոգևոր-վարչատարածքային երեք կառույցների՝ Փարիզի, Լիոնի և Մարսելի շրջանների մեջ, որոնք գտնվում են Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակության գերակայության ներքո: Պատվիրակության կենտրոնը Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին է: Հայրապետական պատվիրակն է Գյուտ արք. Նազգաշյանը:

**Փարիզի շրջան**, կենտրոնը՝ Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի:

1927-ին կազմավորվել է Հայաստանյազ առաքելական եկեղեցու Փարիզի - շրջակայքի կրոնական ընկերությունը, որի ղեկավար

ստեղծվել են Միջին Ֆրանսիայի (կենտրոնը՝ Լիոն) - Հանրավային Ֆրանսիայի կենտրոնը՝ Մարսել) թեմական կազմակերպությունները: Փարիզի առաջնորդին շնորհվել է հայրապետական պատվիրակի կարգավիճակ:

ժողովարանը: 1902-ին կատարվել է Ս. Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ եկեղեցու հիմնարկեքը (Ա. Մանթաշյանի նյութական օժանդակությամբ), 1904-ին՝ օծումը: Կից գործում է մեկօրյա դպրոց:

Փարիզի հայաբնակ արվարձաններից Ալֆորվիլում 1930-ին կառուցվել է Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին, կից գործում է Ս. Մեսրոպ վարժարանը (ամենօրյա), Առնուվիլ լե Գոնեստում 1931-ին կառուցվել է վարագա Ս. Խաչ եկեղեցին (օծվել է 1932-ին), կից գործում է շաբաթօրյա Վարժարան, Շավիլում 1957-ից գործում է Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: 1975-ին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա. Պալճյանը կատարել է Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցու օծումը: Կից գործում է շաբաթօրյա դպրոց:

Փարիզի հայոց առաջնորդն է Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Գյուտ արք. Նազգաշյանը (1984-ից):

**Լիոնի շրջան**, կենտրոնը Լիոնի Ս. Հակոբ եկեղեցի: Ընդգրկում է Միջին Ֆրանսիայի Լիոնի - Ռոն-Ալպերի հայաշատ շրջանների քաղաքները:

1918-ին Լիոնում, Ստեփան Կարապետ Օղլուի նախաձեռնությամբ, ստեղծվել է Ազգային միությունը, որը կազմակերպել է հայ համայնքի հասարակական, հետագայում նաև հոգևոր կյանքը: Միության վարչությունը հայ ընտանիքների բնակության համար Ֆուայե Լիոնե թաղամասում վարձակալել է փայտաշեն տներ: 1925-ին այդ տներից մեկը վերածվել է մատուռի (Ս. Աստվածածին): Նույն թվականին Լիոնի



մարմինը ներկայացուցչական ժողովն է (ընտրվում է չորս տարին մեկ կազմված է 24 աշխարհիկ - 3 եկեղեցական ներկայացուցիչներից), նախագահն է Փարիզի հայոց հոգևոր առաջնորդը: Նույն թվականին

Փարիզում առաջին հայկական մատուռը՝ Ս. Էջմիածինը, կառուցվել է 1854-ին (գործել է մինչ - 1869-ը): 1870-ից հայերն օգտագործել են Փարիզի Վիեն փողոցում գտնվող բողոքականներին հատկացված



շրջանի հոգևոր առաջնորդ և հայրապետական պատվիրակ Գրիգորիս եպս. Պալաքյանը հանդիպել է Ազգային միության ղեկավարների հետ՝ Ազգային միության զուգահեռ Միջին Ֆրանսիայի թեմական կազմակերպություն ստեղծելու խնդրով: 1927-ից գործել է Լիոնի - շրջակա թեմերի ազգային գավառական խորհուրդը՝ իր մեջ ընդգրկելով Լիոնի - Ռոն-Ալպերի շրջանի հայկական ծխերը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այս թեմական կազմակերպությունը դադարել է գործելուց:

1932-ին Ս. Աստվածածին մատուռը, պահպանելով անունը, փոխադրվել է մեկ այլ թաղամաս, որտեղ գործել է մինչև 1962-ը: Կից բացվել է մեկօրյա Զայկազյան վարժարանը (1936-ից): 1954-ին եկեղեցական հանձնաժողովի նախաձեռնությամբ Շինարար տիկնանց հանձնախմբի և Զայաստանյայց եկեղեցու երիտասարդ միության գործակցությամբ (բարերար Կարապետ Զակոբյանի նյութական օժանդակությամբ) Լիոնում կառուցվել է առաջնորդանիստ Ս. Զակոբ եկեղեցին (օծվել է 1963-ին): Կից գործում է մեկօրյա դպրոց: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 1981-ին, օծվել 1984-ին:

1987-ին Նորովան եպս. Չաքարյանի ջանքերով Լիոնի աստվածաբանական համալսարանում բացվել է Գալուստ Կյուլպենկյանի անվան հայագիտական ամբիոնը: 1988-ից ցայսօր առաջնորդարանին կից գործում է Մարգարյան-Փափազյան ամենօրյա վարժարանը: 1977-ին կազմակերպվել է Լիոնահայ տիկնանց միությունը, որն ունի մատենադարան (Սերովբե արք. Մանուկյանի անվան): Լիոնի «Եփրատ» տպարանում 1982-90-ին տպագրվել է «Ս. Զակոբ» պարբերականը:

Լիոնի շրջանի մեջ են մտնում շրջակա հայաշատ քաղաքները. Դեսինում գործում է Ս. Աստվածածին եկեղեցին (կառուցվել է 1946-ին), կից՝ շաբաթօրյա վարժարան: Զամայնքի հոգևոր հովիվն է Մկրտիչ քնն. Պալապանյանը:

Շարվիեում գործում է Ս. Նշան եկեղեցին (օծվել է 1982-ին): Ունի իր վարչական խորհուրդը: Գործում են տարբեր հանձնաժողովներ (կրոնա-

կան, կրթական, մշակութային): Զամայնքի հոգևոր հովիվն է Կարապետ վրդ. Զարությունյանը:

Սենտ Ետիենում գործում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (օծվել է 1984-ին), կից՝ ժողովրդական տուն՝ մշակութային նպատակների համար: Զամայնքի հոգ-որ հովիվն է Տաթև վրդ. Մուրադ-Զակոբյանը:

Ռոմանում 1988-ին քաղաքատարանի համաձայնությամբ Վալանսի կաթողիկե եպիսկոպոսարանի - Լիոնի Զայ առաքելական եպիսկոպոսարանի միջև կնքվել է պայմանագիր՝ Ս. Նիկողայոս կաթողիկե եկեղեցին 30 տարով հայերին հանձնելու մասին: Գործում է եկեղեցական խորհուրդ, որը քաղաքի Զայ բարեկամության միության համագործակցությամբ օժանդակում է եկեղեցուն: Զամայնքի հոգևոր հովիվն է Նարեկ քնն. Վարդանյանը:

Վալանսում 1951-ին կառուցվել է մատուռ, որը 1953-ին օծվել է որպես եկեղեցի՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ անունով: Գործում է Ազգային կրոնական ընկերակցությունը: 1990-ին եկեղեցական վարչությունը գնել է կաթոլիկ միաբանությանը պատկանող XVII դ. եկեղեցական համալիր (Նորոգվել է ազգային բարերար Վ. Պոզաճյանի նյութական օժանդակությամբ), կառուցվել է հայկական ոճով խորան, - եկեղեցին վերանվանվել Ս. Սահակ (օծվել է 1992-ին), կից գործում է մեկօրյա Դավիթյան վարժարանը՝ Վալանսի - շրջակայքի հոգևոր հովիվ Անդրանիկ քնն. Մալճյանի ղեկավարությամբ:

Գրենոբլ - Վիեն քաղաքներում առայժմ հայկական եկեղեցիներ չկան: Գործում են եկեղեցական վարչություններ, որոնք կրոնական արարողություններ կատարելու համար Լիոնից այցելու հովիվ են հրավիրում՝ օգտագործելով տեղի կաթոլիկ եկեղեցին:


Լիոնի շրջանի հոգևոր առաջնորդը և հայրապետական պատվիրակի փոխանորդն է Նորվան եպս. Չաքարյանը (1980-ից):

**Մարսելի շրջան**, կենտրոնը Մարսելի Ս. Սահակ - Ս. Մեսրոպ Սրբոց թարգմանչաց եկեղեցի (օծվել է 1931-ին): Ընդգրկում է Զարավային Ֆրանսիայի հայաշատ քաղաքները:

1927-ին հայրապետական պատվիրակ և Փարիզի հայոց առաջ-

նորդ Գրիգորիս եպս. Պալաքյանի նախաձեռնությամբ Մարսելի շրջանում ստեղծվել է թեմական կազմակերպություն, ընտրվել է Ազգային կենտրոնական վարչությունը: Մարսելում կառուցվել են Ս. Կարապետ (1928) - Ս. Աստվածածին (1929) եկեղեցիները:

1920-30-ական թթ. հայերը հաստատվել են նաև Մարսելի արվարձաններում: Բոմոնի Սեն Լուում 1929-ին Գրիգորիս եպս. Պալաքյանի նախաձեռնությամբ և հայերի Նյու-



Ալեքսանդր Ս. Պոզաճյանի կողմից կառուցված Ս. Նիկողայոս եկեղեցին

թական օժանդակությամբ կառուցվել է Ս. Գևորգ եկեղեցին, որին կից գործում է մանկապարտեզ: Սեն ժերմում 1933-ին կառուցվել է Սահակ-Ս. Մեսրոպ եկեղեցին, կից գործում է շաբաթօրյա դպրոց: Սենտ Անտուան-Կամպանյո Ֆրենում 1929-ից գործում է Ս. Թադեոս-Ս Բարդուղի-մեսո եկեղեցին, որին կից կազմակերպվում են հայերենի դասընթացներ: Բոմոնում 1932-ից գործում է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, կից՝ շաբաթօրյա դպրոց: Գործում են Կրոնական ընկերակցությունը - թաղական խորհուրդը:

Նիս քաղաքում 1928 ՎՆ ին Գրիգորիս եպս. Պալաքյանի նախաձեռնությամբ կառուցվել է Ս. Աստվածածին մատուռը (ներկայումս՝ եկեղեցի): Եկեղեցու շենքում մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը (1939) գործել է դպրոց, որը հետո վերափոխվել է մեկօրյա դասընթացների: Նիսի շրջանի Զայոց կրոնական ընկերակցությունը զբաղվում է եկեղեցու, Պարսամյան



վարժարանի խնդիրներով: Հոգևոր հովիվն է Լարեկ եպս. Շաքարյանը (2000-ից):

Լա Սիոտայում 1994-ին օծվել է Ս. Փրկիչ եկեղեցին, որին կից գործում է շաքարայր դպրոց:

Սեն Ռաֆայելում 1977-ից գործում է Ս. Հովհաննես եկեղեցին:

Մարսելի շրջանի հոգևոր առաջնորդը և հայրապետական պատվիրակի փոխանորդն է Տարոն եպս. Ծերեճյանը (1990-ից):

Ֆ-ում կան նաև հայ կաթոլիկ և հայ ավետարանական համայնքներ:

Ֆ-ի կաթոլիկ հայերը (շուրջ 10 հզ.) 1954-ից ունեն իրենց հովվապետական աթոռը (մինչ այդ

ֆրանսահայ կաթոլիկ համայնքների հոգևոր հովիվները ենթակա էին իրենց շրջանների ֆրանսիացի եպիսկոպոսներին), որը միավորում է 7 ժողովրդապետություն (Փարիզ, Առնուվիլ, Լիոն, Մարսել, Վիեն, Վալանս, Սեն Շամոն) – 7 եկեղեցի: Հայ կաթոլիկ համայնքներում գործում են Ս. Խաչ ընկերակցությունը (ուսի երիտասարդական, բարեգործական մարմիններ, ամառային հանգստյան տուն), Ի նպաստ կաթոլիկ հայերի ընկերակցությունը, Անարատ հղության քույրերի միաբանության Մարսելի վարժարանը և Լիոնի աղջկանց կենտրոնը: Ֆ-ի հայ

կաթոլիկ համայնքի ժողովրդապետն է Գրեգուար Գաբրյանը (1997-ից): Հրատարակում է «Հայկական եկեղեցի» ամսագիրը:

Ֆ-ի հայ ավետարանականներն (շուրջ 5 հզ.) ունեն 12 եկեղեցի (4-ը՝ Մարսելի, 3-ը՝ Փարիզի, 3-ը՝ Դրոմ-Արտեշի, 2-ը՝ Լիոնի շրջանում): Գործում են Ֆրանսիայի Հայ ավետարանական եկեղեցիների մշակութային ընկերակցության միությունը, երիտասարդական, բարեգործական («Հույս Հայաստանին») կազմակերպություններ, ամառային հանգստի ճամբարներ: Հրատարակում են «Բանբեր» և «Լյումիլյոն» («Կանթեղ») կրոնական ամսաթերթերը:

**ԴՊՐՈՑ**

Առաջին հայկական դպրոցը Ֆ-ում Սամուել-Մուրատ վարժարանն էր, որը 1846-ին Պաղուայից (Իտալիա) փոխադրվել է Փարիզ: 1855-59-ին Փարիզի Գոնել արվարձանում գործել է ամենօրյա Հայկազյան վարժարանը: 1928-ից Փարիզի Ռենսի արվարձանում հաստատվել է Դպրոցատեր տիկնանց վարժարանը:

Ֆրանսահայ համայնքի կրթական կյանքը վերելքի շրջան է անցրել 1980-ական թթ.: Հիմնվել են Ս. Մեսրոպ (Ալֆորվիլ), Մարգարյան-Փափազյան (Լիոն), Պարսամյան (Նիս), Թարգմանչաց (Իսի լե Մալինո) ամենօրյա վարժարանները, Համագգայիին լիցեյը – Անարատ հղության քույրերի վարժարանը (Մարսել): Այս դպրոցները երկլեզվյան են և առաջնորդվում են ֆրանսիական միջնակարգ վարժարանների պետական ծրագրով: Հանրակրթական առարկաներին զուգահեռ այստեղ հայերեն դասավանդվում են հայոց լեզու և գրականություն, հայոց պատմություն և աշխարհագրություն, հայ մշակութային պատմություն, կրոն ևն:

Ներկայումս Ֆ-ում գործող 6 հայկական ամենօրյա դպրոցներում աշակերտության ընդհանուր թիվը շուրջ 800 է, մինչդեռ երկրում դպրոցական տարիքի հայ երեխաների թիվը մոտավոր հաշվումներով 50 հզ. է:

Ֆրանսահայ համայնքներում գործում են նաև շուրջ 50 մեկօրյա դպրոցներ, որոնք բացվել են եկեղեցիների, բարեսիրական, մշակութային, հայրենակցական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների կամ առանձին

բարերարների հովանավորությամբ: Դրանք հայապահպանության յուրահատուկ կենտրոններ են՝ կրթական որոշակի ծրագրով, որտեղ հայ մանուկները սովորում են հայոց լեզու և գրականություն, պատմություն, կրոն, հայկական երգ ու պար: Հայերենի դասընթացներ կազմակերպվում են նաև ֆրանսիական մի շարք քոլեջներում և լիցեյներում: 1994-ից հայերենը Ֆ-ի կառավարության որոշումով ստացել է առաջին կարգի օտար լեզվի կարգավիճակ:

1994-ին Նիսում տեղի է ունեցել ֆրանսահայ ամենօրյա վարժարանների առաջին համագումարը (1996-ին շարունակել է իր աշխատանքները) որտեղ քննարկվել են հայկական վարժարաններին մտահոգող հարցեր:

**Սամուել-Մուրատ վարժարան**, ամենօրյա դպրոց, հիմնադրվել է 1832-ին, Իտալիայի Պաղուս քաղաքում եվրոկացի Սամուել Մուրատյանի կտակի համաձայն, Միսիթարյան միաբանության նախաձեռնությամբ: 1846-ին տեղափոխվել է Փարիզ, 1870-ին՝ Վենետիկ, միացվել է Ռաֆայելյան վարժարանին և կոչվել Մուրատ-Ռաֆայելյան: Միսիթարյան միաբանները, ստանալով ֆրանսիական կառավարության համաձայնությունը,

1929-ին վարժարանը Սամուել-Մուրատ անունով բացել են Փարիզում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին փակվել է, վերաբացվել 1946-ին: 1848 - 1870-ին այստեղ կիրառվել է ֆրանսիական միջնակարգ դպրոցի ծրագիրը (ուսման տևողությունը վեց տարի), ընդունվել են նախակրթարանն ավարտածները: Այնահետև գործել է ժամանակակից ֆրանսիական լիցեյի ծրագրով: Շրջանավարտներն ստացել են բակալավրի աստիճան և իրավունք՝ առանց քննության ընդունվելու համալսարան: 1991-95-ին վարժարանում գործել է երկօրյա մանկապարտեզ, դասավանդվել են հայոց լեզու և կրոն: Փակվել է 1995-ին՝ նյութական դժվարությունների պատճառով:

**Հայկազյան վարժարան**, ամենօրյա հայկական դպրոց՝ Փարիզի Գոնել արվարձանում: Հիմնադրել են 1855-ին Մուրատյան վարժարանից հեռացած, կաթոլիկությունից հրաժարված վարդապետներ Ս. Թեոդորյանը, Ա. Գալֆայանը, Գ. Այվազովսկին: Մինչ-1857-ը կոչվել է «Արևելյան բազմալեզու ճեմարան»: Նպատակն էր հայ երեխաներին հաղորդակից դարձնել եվրոպական, մասնավորապես ֆրանսիական մշակույթին և



միաժամանակ հայ համայնքների համար պատրաստել կրթված մարդիկ, ուսուցիչներ:

Վարժարանն ունեցել է երկու դասարան, 1858-ին՝ չորս: Սովորել են 10-15 տարեկան երեխաներ: Դասավանդվել են հայոց լեզու և պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, մատենագիտություն, կրոն, ֆրանսերեն, անգլերեն, լատիներեն, քիմիա, կենդանաբանություն, իրավագիտություն, փիլիսոփայություն, գծագրություն, նկարչություն, երաժշտություն, մարմնամարզություն: Բացի հայագիտական առարկաներից ու լեզուներից, ուսուցումն ընթացել է ֆրանսերենով: Հայկազյան վարժարանում սովորել են նաև ֆրանսիացիներ: Փակվել է 1859-ին:

**Դպրոցատեղ տրկնանց վարժարան**, ամենօրյա դպրոց, հիմնվել է 1879-ին, Կ. Պոլսում՝ հայ մտավորական կանանց նախաձեռնությամբ և հանրության նյութական օժանդակությամբ: Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերի վարժարանների համար ուսուցչուհիներ պատրաստելու նպատակով: 1896-ին փակվել է և վերաբացվել 1908-ի: Մեծ եղեռնից հետո դարձել է որբանոց: 1922-ին տեղափոխվել է նախ Սալոնիկ (Հունաստան), ապա՝ Մարսել: 1928-ից հաստատվել է Փարիզի Ռենսի արվարձանում՝ արդիական հարմարություններ ունեցող շենքում (գնվել է ՀԲԸՄ բարերար Տիգրան Զելեկյանի միջոցներով): Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը (1939) վարժարանին կից գործել են կարուճկի արհեստանոցներ, մեքենագրության, սղագրության, հիվանդապահության բաժիններ: 1948-ից ֆրանսիական կառավարությունն այն ճանաչել է որպես երկրորդական (միջնակարգ) վարժարան: Առաջնորդվում է ֆրանսիական դպրոցների պետական ծրագրով: Հայոց պատմությունն ու Հայաստանի աշխարհագրությունը դասավանդվում են հայերենով: Ունի երգչախումբ: Պահվում է ՀԲԸՄ-ի, Տիկնանց խնամակալության միության և այլ հայ բարեգործական կազմակերպությունների միջոցներով, ինչպես նաև անհատների նվիրատվու-

թյուններով: Մինչև 1960-ական թ. իգական միակ գիշերօթիկ վարժարանն էր սփյուռքում (ներկայումս՝ երկսեռ): 1995-ին աշակերտների թիվը՝ 220, ուսուցիչներինը՝ 23:

**Հայկազյան վարժարան**, մեկօրյա վարժարան: Հիմնվել է 1936-ին, Լիոնում: Գործել է նաև երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: 1942-ին ունեցել է 72, 1963-ին՝ 100, 1996-ին՝ 30 աշակերտ: Դասավանդվում են հայոց լեզու, պատմություն, կրոն, եկեղեցական երգեցողություն:

**Սուրբ Մեսրոպ**, ամենօրյա վարժարան: Հիմնվել է 1978-ին՝ Ալֆորվիլի հայկական եկեղեցու հովանավորությամբ: Նախապես գործել է որպես մանկապարտեզ: 1991-ից ունեցել է նախակրթարանի բաժին: 1994-ին աշակերտների թիվը՝ 121 (80-ը՝ մանկապարտեզում, 41՝ ՎՆՆ՝ նախակրթարանում), ուսուցիչներինը՝ 8 (3-ը՝ հայ),

1997 ՎՆ ին՝ աշակերտների թիվը՝ 161 (81-ը՝ մանկապարտեզում, 80-ը՝ նախակրթարանում), ուսուցիչներինը՝ 17:

**Համազգային ամենօրյա վարժարան**, լիցեյ: Հիմնվել է 1980



Նիսի Պարսամյան համալիրը

ՎՆ ին, Մարսելում՝ Համազգային մշակութային միության նախաձեռնությամբ և նյութական օժանդակությամբ: Նախապես գործել է որպես մանկապարտեզ: Ունի 13 դասարան (մանկապարտեզ, նախակրթական, երկրորդական, լիցեյ): 1994-ին աշակերտների թիվը՝ 180: Վարժարանին կից գործում է ծնողական միությունը: Վարժարանում երեխաները ստանում են լիարժեք երկլեզվյան կրթություն՝ տարրականից մինչև ավարտական դասարան:

**Մարգարյան-Փափազյան վարժարան**, ամենօրյա վարժարան:

Հիմնվել է 1987-ին, Նորվան եպս. Չաքարյանի նախաձեռնությամբ, Ազգային միության գործակցությամբ և Արփինե ու Մարգար Մարգարյանների նյութական օժանդակությամբ: Վարժարանն ստացել է պետական հովանավորություն: Առաջնորդվում է ֆրանսիական դպրոցների պետական ծրագրով: Ուսուցումը ֆրանսերեն է, մայրենի լեզվով դասավանդվում են հայոց պատմություն, կրոն: Ունի 6 դասարան (3-ը՝ մանկապարտեզ, 3-ը՝ նախակրթարան): 1994-ին աշակերտների թիվը՝ 240, ուսուցիչների թիվը՝ 6 (4-ը՝ ֆրանսիացի), 1997-ին աշակերտների թիվը 104: Հովանավորում է Լիոնի - շրջակայքի կրոնական ընկերակցությունը՝ ծնողական միության գործակցությամբ: Պահպանվում է նաև Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության, «Նապոլեոն - Լիա Բուլուկյան» հիմնադրամի, անհատների նվիրատվություններով:

**Պարսամյան վարժարան**, ամենօրյա վարժարան: Հիմնվել է 1988-ին՝ Նիսում Պարսամյան ընտանիքի և քաղաքապետարանի նյութական օժանդակությամբ: Դասերն անցկացվում են Նիսի Ս. Աստվածածին եկեղեցուն կից Պարսամյան համալիրում: Սկզբնական շրջանում գործել է որպես մանկապարտեզ: Ունի 5 դասարան (2-ը՝ մանկապարտեզ, 3-ը՝ նախակրթարան): 1994-ին աշակերտների թիվը՝ 54 (32-ը՝ մանկապարտեզում, 22-ը՝ նախակրթարանում), ուսուցիչներինը՝ 5: 1997-ին աշակերտների թիվը՝ 45 (24-ը՝ մանկապարտեզում, 20-ը՝ նախակրթարանում): Դասավանդում են հայերենով և ֆրանսերենով: Կան նաև անգլերենի դասեր: Հովանավորում է Նիսի և շրջանի հայոց կրոնական ընկերակցությունը՝ ծնողական միության օժանդակությամբ:

**Թարգմանչաց վարժարան**, ամենօրյա դպրոց: Հիմնվել է 1996-ին, Իսի լե Մուլինյում: Դասավանդում են հայերենով և ֆրանսերենով: Ունի մանկապարտեզի 2 դասարան: 1997-ին աշակերտների թիվը՝ 13:





**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔ**

Ֆրանսահայ համայնքի ծնավորումից ի վեր ստեղծվել են հասարակական, բարեգործական և մշակութային բազմաթիվ կազմակերպություններ: Դեռևս XIX դ. կրթություն ստանալու նպատակով Ֆ. եկած հայ երիտասարդները, որոնք մասնակցել են Ֆ-ի հեղափոխական-դեմոկրատական շարժումներին, մասնավորապես 1848-ի հեղափոխությանը, 1849-ին Փարիզում հիմնել են Արարատյան ընկերությունը (կազմակերպիչներ՝ Նահապետ Ռուսինյան, Գրիգոր Աղաթոն, Նիկողոս Պալյան, Սերովբե Վիչենյան, Ստեփան Ոսկան, Զովսեփ Շիշմանյան և ուրիշներ), որը քարոզել է հայ ժողովրդի ազգային ազատագրության գաղափարը:

XIX դ. վերջին - XX դ. սկզբին, երբ Թուրքիայում համիդյան բռնությունների հետևանքով զգալի թվով հայեր արտագաղթել և հաստատվել են Ֆ-ում, ստեղծվել են ազգային կյանքը կազմակերպող մի շարք նոր համայնքային կառույցներ: Շոշափելի գործունեություն են ծավալել հայ ազգային քաղաքական կուսակցությունները, բարեգործական - հայրենակցական միությունները:

**Հայոց հայրենասիրական միություն**, հայ ազգային-ազատագրական կազմակերպություն: Ստեղծվել է 1888-ին, Մարսելում՝ Մկրտիչ Փորթուգալյանի - նրա «Արմենիա» թերթի շուրջ համախմբված գործիչների ջանքերով: Եղել է Արմենական կուսակցության միջուկը:

**Փարիզի հայերի բարեգործական միություն**, հիմնվել է 1892-ին՝ ուսանողներին - գաղթականներին օգնելու նպատակով: Առաջին համաշխարհային պատերազմից հետո վերանվանվել է Հայ աղքատախնամ ընկերակցություն: 1925-ից մինչև 1950-ական թթ. կազմակերպել է անվճար բուժօգնություն կարիքավոր ընտանիքներին: 1937-ին միաթյունը պաշտոնապես գրանցվել է Ֆ-ի առողջապահության նախարարության կողմից: Պատերազմից հետո հիմնել է ծերանոցներ Մոնմորանսիում, Գոնեսում, Սեն Ռաֆայելում: Ներկայումս գործում է որպես Ընկերային ապահովության մարմին պետական սոցիալական ապահովության ցանցում, օգնություն է ցույց տալիս միայնակ ծերերին, նպաստներ սահմանում ուսանողների համար:

**ՀԲԸՄ-ի մասնաճյուղ**, հիմնվել է 1910-ին: 1922 - 42-ին Փարիզում հաստատվել է ՀԲԸՄ կենտրոնական վարչությունը, շրջանային կազմակերպություններ հիմնել Մարսելում, Լիոնում, Վալանսում, Նիսում, Սեն Շամոնում, Գարդա-

նում, Ավինյոնում: Մասնաճյուղն օգնություն է ցուցաբերել ներգաղթողներին, խոշոր ավանդ է ունեցել հայրենադարձության կազմակերպման գործում: Միության հովանավորությամբ գործում են Մարի Նուպար ուսանողական տունը, Նուպարյան մատենադարանը, Ալեք Մանուկյան մշակութային կենտրոնը (որը քաղաքի հայության հավաքատեղիներից մեկն է), երիտասարդական մարմիններ, կազմակերպվում են մշակութային, մարզական միջոցառումներ: Մասնաճյուղը նյութապես օժանդակում է համայնքում գործող մեկօրյա վարժարաններին: 1960-70-ական թթ. շուրջ 3 մլն ֆրանկի նպաստ է տրամադրել Սևրի Սամուել-Մուրատ, Դպրոցասեր տիկնանց վարժարաններին: Հրատարակում է «ՀԲԸՄ-ի լրատու» (ֆրանսերեն) շաբաթաթերթը:

**Ֆրանսահայ տիկնանց միություն**, կազմակերպվել է 1913-ին: ՀԲԸՄ-ի հովանու ներքո: Գործունեությունը ծավալվել է 1922-ից, երբ հիմնվել են միության երեք մարմինները՝ Որբերի օգնության մարմին, Հայ Կարմիր խաչի օգնության մարմին, Գաղթականաց օգնության մարմին (1925-ից փոխանցվել է Հայ աղքատախնամ ընկերակցությանը): Որբերի - ուսանողական օգնության մարմինը գործում է ցայսօր: 1994-ից այն կազմակերպում է մարդասիրական օգնություն Հայաստանին և Արցախին:

**Հայ բժշկական միություն**, ստեղծվել է 1920-ին՝ բժիշկ Զ. Զուլույանի նախաձեռնությամբ: Համախմբել է ֆրանսահայ բժիշկներին: Հրատարակել է մի շարք բժշկական պարբերականներ «Բուժանք» (Փարիզ, 1926 - 1930), «Արձագանք ճշմարտության» (Փարիզ, 1928-33), «Առողջ կյանք» (Փարիզ, 1931-32), «Հայ բույժ» (Փարիզ, 1934-67), որտեղ տպագրվել են հայ անվանի

բժիշկների ուսամնասիրություններ, մեկնաբանություններ, ֆրանսիական բժշկության մասին տեղեկություններ:

Հայ բժշկական միությանը փոխարինել է 1975-ին բժիշկ Սերժ Սիմոնյանի նախաձեռնությամբ ստեղծված Ֆրանսահայ բժիշկների միությունը (ՅՈՒՄԱՖ): Կազմակերպում է ֆրանսահայ բժիշկների գործնական աշխատանքը Հայաստանի հիվանդանոցներում, ինչպես նաև Հայաստանի երիտասարդ բժշկական կադրերի վերապատրաստումը Ֆ-ում: Միությունը շոշափելի օգնություն է ցույց տվել Հայաստանի առողջապահական մարմիններին՝ առաքելով նորագույն սարքավորումներ - գործիքներ, դեղամիջոցներ: 1988-ի Սպիտակի երկրաշարժից հետո ընդլայնել է գործունեությունը: Մասնաճյուղեր ունի Փարիզում, Լիոնում, Մարսելում: Որպես Հայ բժիշկների համաշխարհային միության անդամ՝ մասնակցում է միջազգային համագումարներին: 1975-ից հրատարակում է «ՅՈՒՄԱՖ» բժշկական, գիտական - մշակութային տեղեկատվության եռամսյա հանդեսը:

**ՀՄԸՄ Ֆ-ի մասնաճյուղ**, ստեղծվել է 1920-ին: Տեղական մասնաճյուղեր ունի Մարսելում, Դեսիլում, Վիենում, Գրենոբլում, Լիոնում և այլ հայաբնակ վայրերում:

Միությունը համայնքում կազմակերպել է սկսնակական խմբեր, անցկացրել տարբեր ու բազմազան մարզաձևերի գծով մրցումներ, մրցաշարեր: ՀՄԸՄ-ի ֆուտբոլային թիմերի որոշ մարզիկներ նույնիսկ ընդգրկվել են Ֆ-ի ազգային հավաքականի կազմում: Համագործակցում է Հայաստանի մարզական կազմակերպությունների հետ:

**Հայ նախկին ռազմիկների միություն**, հիմնվել է 1922-ին, Փարիզում:



Մասնաճյուղ ունի Մարսելում: Անդամներն են Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում ֆրանսիական բանակում ծառայած հայ նախկին ռազմիկներն ու կամավորները, այդ թվում թուրքական ճակատում ֆրանսիական հրամանատարության տակ պատերազմական գործողություններին մասնակցած Հայկական լեգեոնի մասնակիցները: Նախագահ՝ գեղապետ Անդրե Սեֆերյան (1996-ից): Միությունն ակտիվորեն մասնակցում է ֆրանսահայ համայնքի հասարակական և քաղաքական կյանքին, ձեռնարկում զանազան միջոցառումներ՝ կապված Ֆ-ի ազատագրման պայքարում հայ մարտիկների մասնակցության տարեթվերի հետ (օրինակ՝ յուրաքանչյուր տարի նշվում է Միսաք Մանուշյանի օրը): Հրատարակում է «Հայ նախկին ռազմիկների լրատու» տեղեկագիրը:

**Վասպուրականի հայրենակցական միություն**, կազմակերպվել է 1923-ի մայիսի 28-ին, Մարսելում: Հիմնադիրներ՝ Պողոս և Արամ Հյուսյաններ, Արմենակ Շահպաղյան, Ազգին Մարտիրոսյան, Մեսրոպ Շահինյան և ուրիշներ: Միության նպատակն էր նպաստել հայերենի ուսուցմանը, մշակութային միջոցառումների կազմակերպմանը, օգնություն ցուցաբերել կարիքավոր հայրենակիցներին, կապ պահպանել այլ շրջանների վասպուրականցիների հետ: Ամեն տարի մայիսին կազմակերպում է Վասպուրականի հերոսամարտի փառատոն:

**Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ)** Ֆ-ի մասնաճյուղ, հիմնվել է 1925-ին: Նպատակն էր օգնություն ցուցաբերել Խորհրդային Հայաստանի բնակչությանը, օժանդակել երկրի շինարարությանը, սերտ կապեր հաստատել հայրենիքի հետ, նպաստել հայրենադարձությանը: 1933-ին Փարիզի շրջանում ունեցել է 16 բաժանմունք: Հրատարակել է «ՀՕԿ» ամսագիրը (1933-35): 1935-ին կազմակերպությունն արգելվել է ֆրանսիական իշխանությունների կողմից:

**Համազգային հայ կրթական - մշակութային միության Ֆ-ի մաս-**

**նաճյուղ**, հիմնվել է 1928-ին ՀՀԴ նախաձեռնությամբ: Մասնաճյուղեր ունի Փարիզում և Մարսելում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին գործունեությունն ընդհատվել է: Միության հովանավորությամբ գործում է Համազգային լիցեյը (Մարսելում), կազմակերպվում են գիտաժողովներ, թատերական երեկոներ («Դիմակ» թատերախմբի մասնակցությամբ), ցուցահանդեսներ, համերգներ: 1988-ին Փարիզում նշվել է միության գործունեության 60-ամյակը:

**Հայ այրիների միություն**, ստեղծվել է 1928-ին: Հիմնադիր՝ բժիշկ Գուրգեն Մեծատուրյան: Նրա ջանքերով 1929-ին միությունը ճանաչվել է Համաշխարհային սկաուտական բյուրոյի կողմից: 1925-35-ին հրատարակել է իր պաշտոնաթերթը՝ «Հայ այրի»: 1950-ական թթ. շուրջ 5 հզ. հայ երիտասարդներ անդամագրված են եղել միությանը: 1997-ի հունվարին միությունը պաշտոնապես գրանցվել է Հայաստանում. կոչվում է «Հասկ»



Հայաստանի ազգային սկաուտական կազմակերպություն:

**Հայ նախկին սպայից միություն**, կազմակերպվել է 1929-ի հուլիսին, Փարիզում՝ Ֆ-ում բնակվող Հայաստանի Հանրապետության (1918-20) բանակի նախկին սպաների նախաձեռնությամբ: Հիմնադիր-նախագահ՝ գեներալ Գաբրիել Կորգանյան: Միության նպատակն էր կապ պահպանել հայ և օտար նախկին սպաների հետ, նյութական օգնություն ցուցաբերել նրանց: Միության պատվավոր անդամներ են եղել Ավետիս Ահարոնյանը, Ալեքսանդր Խատիսյանը, Կրաֆտ Բոնարը:

**Ֆրանսահայ Կապույտ խաչ**, բա-

րեգործական միություն: Հիմնվել է 1934-ին, Փարիզում ՀՀԴ հովանավորությամբ: Մասնաճյուղեր ունի Մարսելում. Լիոնում, Նիսում և գրեթե բոլոր հայ համայնքներում: Չբաղվում է կրթական (կազմակերպում է հայերենի դասընթացներ), առողջապահական խնդիրներով, օգնում է ուսանողներին, կարիքավոր ընտանիքներին, միայնակ ծերերին: 1957-ից կազմակերպության հովանավորությամբ գործում է ամառային հանգստի ճամբար՝ Բելֆոնտեն գյուղում:

Գործակցությունը՝ Հայ օգնության միության (ՀՕՄ) հետ, որի փաստական մասնաճյուղն է Կապույտ խաչը, ընդլայնում է նրա հնարավորությունների դաշտը: Ծանրակշիռ էր 1988-ի Սպիտակի երկրաշարժից հետո ՀՕՄ - Կապույտ խաչի միասնական ջանքերով Հայաստան առաքված օգնությունը: Հայաստանում բացվել է միության գրասենյակը:

**Հայ ազգային ճակատ (ՀԱՃ)**, ընդհատակյա կազմակերպություն (1942-45): Ստեղծվել է ֆրանսահայ կոմունիստների նախաձեռնությամբ, միավորել հայրենասերներին՝ անկախ սոցիալական պատկանելությունից և քաղաքական հայացքներից: Կազմակերպիչներն էին Հանրի Մարմարյանը, Մեսրոպ Ասատուրյանը, Դավիթ Դավթյանը, Շահե Տատուրյանը, Մելքոն Գեղանին, Կարապետ Բյուրեջյանը և ուրիշներ: Գերմանական օկուպացիայից Ֆ-ի ազատագրման պահին ՀԱՃ-ի շարքերում հաշվվում էր ավելի քան 10 հզ. հայ հայրենասեր: 1943-ին ՀԱՃ-ի նախաձեռնությամբ ստեղծվել է Հայ երիտասարդ հայրենասերների միությունը: ՀԱՃ-ը կազմակերպել է նաև նյութական օգնություն Ֆ-ի ազատագրության ֆոնդին: 1943-44-ին Հարավային և Կենտրոնական Ֆ-ի ՀԱՃ-ի կոմիտեները հանգանակել և Դիմադրության ֆոնդին են հանձնել 7 մլն ֆրանկ: Չզալի գումար է հանձնվել Խորհրդային Միության բանակի համար «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման հիմնադրամին: ՀԱՃ-ը մասնակցել է Փարիզի և Ֆ-ի այլ քաղաքների ու շրջանների




ազատագրմանը: Ընդհատակում հրատարակել է պարբերականներ «Յայ ճակատ», «Ժողովուրդ», «Ժյուն Արմենիեն» («Երիտասարդ հայ»), «Էմանսիպասիոն» («Ազատագրում»), «Ժյունես լիբր» («Ազատ երիտասարդություն») և: 1945-ին ՅԱԸ-ը իր համագումարում վերակազմավորվել է Ֆրանսիայի հայ ազգային ընդհանուր միություն (ՖՅԱԸՄ): Նրա գործունեությանը մասնակցել են համայնքի գրեթե բոլոր քաղաքական կազմակերպությունները, բարեսիրական, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդական միությունները: Բացառություն է կազմել ՅՅԴ, սակայն նրա ւնդւսմներից շատերը անհատական նախաձեռնությամբ նույնպես մասնակցել են ՖՅԱԸՄ-ի աշխատանքներին: 1948-ին, արդեն «սառը պատերազմի տարիներին», ֆրանսիական կառավարությունն արգելել է Դիմադրության տարիներին ստեղծված կազմակերպությունները, որոնց թվում և ՖՅԱԸՄ-ը:

**ՅՅԴ - նոր սերունդ երիտասարդական միություն**, հիմնվել է 1945-ին, Փարիզում՝ ՅՅԴ նախաձեռնությամբ: Մասնաճյուղեր ունի Ֆ-ի գրեթե բոլոր հայկական համայնքներում: Նպատակն է ֆրանսիական հասարակայնությանը ծանոթացնել հայ մշակույթին, Յայկական հարցին: Կազմակերպում է գիտաժողովներ, մշակութային երեկոներ, մարզական միջոցառումներ: Ունի պարախումբ՝ «Նաիրի»: Յրատարակում է «Յայաստան» (1947-ից) ամսագիրը:

**Ֆրանսահայ երիտասարդական միություն** (ֆրանսերեն ԺԱՖ), հիմնադրել են ֆրանսիական Դիմադրության շարժման հայ նախկին մարտիկները՝ 1945-ի աշնանը: 1947-ից Դեմոկրատական երիտասարդության համաշխարհային ֆեդերացիայի անդամ է: Կենտրոնական վարչությունը Փարիզում է, մասնաճյուղեր ունի Մարսելում, Լիոնում, Վալանսում և Ֆ-ի հայաշատ Մյոնի քաղաքներում: Միության նպատակն է ֆրանսահայերին և ֆրանսիացիներին ծանոթացնել հայ բազմադարյան պատմությանն ու մշակույթին, ամրապնդել ֆրանս - հայկական

բարեկամությունը: Սերտորեն համագործակցում է ֆրանսահայ մշակութային միության հետ, կազմակերպում հայ արվեստի և մշակույթի երիտասարդական փառատոներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ և այլ միջոցառումներ: 1963-ին Փարիզում անցկացրել է գրականության և արվեստի փառատոն: Ժյուրիի նախագահն էր Արամ Խաչատրյանը: Իր մասսայականությամբ աչքի է ընկել ԺԱՖ-ի կազմակերպած 1984-ի փառատոնը: Յրատարակում է «Նոթըր Կուա» («Մեր



ծայնը», 1951-ից) ամսաթերթը: **«Յանցերի ակումբ»**, մշակութային և բարեսիրական կազմակերպություն, ստեղծվել է 1949-ին, Փարիզում: Ապաքաղաքական յուրատեսակ միություն է, որը ինդիի ունի ներկայացնել հայ արվեստը բարձր պրոֆեսիոնալ մակարդակով: Ակումբը համագործակցում է գանազան մշակութային կազմակերպությունների հետ, վաստակած միջոցներով նյութական օգնություն ցույց տալիս խոստումնալից հայ աշակերտներին: **Ֆրանսահայ մշակութային միություն**, ստեղծվել է 1949-ին, Փարիզում: Կենտրոնական վարչությունը գտնվում է Փարիզում, շրջանային վարչություններ ունի Մարսելում, Լիոնում, մասնաճյուղեր՝ Ֆ-ի շուրջ 20 հայաշատ քաղաքներում: Երկու

տարին մեկ գումարվում է միության համագումարը, որը նրա գերագույն մարմինն է: Կազմակերպում է միջոցառումներ՝ նվիրված հայ մշակույթի և գրականության նշանավոր գործիչներին, հայ ժողովրդի պատմության նշանակալի իրադարձություններին, ցացահանդեսներ, հայ մշակույթի օրեր, կինոփառատոներ, Յայաստանի Յանրապետության գեղարվեստական խմբերի ու մենակատարների հյուրախաղեր Ֆ-ում (վերջին տարիներին նաև եվրոպական այլ երկրներում՝ Մեծ Բրիտանիա, Բելգիա, Գերմանիա) և: Միությունը շոշափելի ավանդ է ներդրել հայրենիքի հետ կապերի ամրապնդման և ընդլայնման գործում: Նրա ջանքերով Յայաստան են բերվել Արշակ Զոպանյանի, Չապել Եսայանի, Սիամանթոյի, քաղաքական գործիչ Արտակ Դարբինյանի արխիվները, Կոմիտասի արխիվի մի մասը, Էդգար Շահինի գրքային նկարագրողումները: Նրա աշակցությամբ Յայաստանի ազգային պատկերասրահը ձեռք է բերել 3. Այվազովսկու 40 նկարները և քանդակագործ Բ. Գյուրջյանի 300-ից ավելի աշխատանքները: Միության նախագահներ են եղել քարտեզագետ Չ. Խանգատյանը (պատվավոր նախագահ), պրոֆեսոր Բ. Սվաճյանը, լրագրող Ա. Ալիքսանյանը, Ս. Թաթիկյանը, Ս. Պերպերյանը և ուրիշներ, 1996-ից՝ Ժորժ Սարյանը: Յրատարակում է «Թրեդ դը Ունյոն» («Միության դիմագիծ») պաշտոնաթերթը:

**Երկիր և մշակույթ**, կազմակերպություն, ստեղծվել է 1977-ին, Փարիզում: Յիմնադիր-նախագահ՝ պատմաբան Գեղամ Գևոնյան (1997): Նպատակն է վերականգնել ու պահպանել հայկական ճարտարապետական հուշարձանները, նպաստել սփյուռք-հայրենիք կապերի ընդլայնմանը: Կազմակերպությունը հնագիտական պեղումներ է կազմակերպում պատմական Յայաստանի տարբեր շրջաններում: Աշխատանքներ են կատարվել Ս. Թադեի վանքում (Իրան), Քեսաբում (Սիրիա), Ամբերդում (Յայաստան): 1988-ի Սպիտակի երկրաշարժից հետո մեծ օգնություն է ցույց տվել տուժած





հայրենակիցներին, մշակել է ծրագիր աղետի գոտու վերակառուցմանն օժանդակելու նպատակով, մասնակցել Սպիտակի շրջանի Գոգարան գյուղի վերականգնման աշխատանքներին: Մասնաճյուղերունի Ֆ-ի քաղաքներում (Լիոն, Մարսել), ԱՄՆ-ում (Կալիֆոռնիա), Մեծ Բրիտանիայում, Բելգիայում, Հայաստանում (Եր-ան): 1995-ին Փարիզում կազմակերպել է լուսանկարչական ցուցահանդես՝ «Հայերի ցեղասպանությունը՝ 1915-16», որը ցուցադրվել է նաև Լիոնում, Թուլուզում, Սեն Շամոնում, Գրենոբլում:

**«Ազատագրություն»** խմբակցություն, բարեսիրական կազմակերպություն, հիմնվել է 1983-ին, Մարսելում՝ ատամնաբույժ Անդրանիկ Հակոբյանի նախաձեռնությամբ: Նպատակն է ֆրանսիական հասարակայնությանը ծանոթացնել հայ ժողովրդի քաղաքական իրավունքներին, համագործակցել Հայաստանի հետ բժշկական, տնտեսական, մշակութային բնագավառներում: 1997-ին կազմակերպությունը Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում բացել է հայ-ֆրանսիական ատամնաբուժական և ատամնատեխնիկական ուսուցման կենտրոն:

**«Ազնավուրը Հայաստանին»** բարեգործական կազմակերպություն, ստեղծվել է 1988-ի դեկտեմբերին (Փարիզում՝ Շառլ Ազնավու-

րի նախաձեռնությամբ: Այդ գործին իր նպաստն է բերել Ազնավուրի մենեջեր Լևոն Սայանը: 1993-ին կազմակերպությունը բացել է իր գրասենյակը Երևանում: Եվրահամայնքի հետ գործակցող այս մարդասիրական կառույցի նպատակն է կազմակերպել բազմակողմանի օգնություն աղետյալ Հայաստանին: Մասնաճյուղեր ունի Գորիսում և Կանադորում Երևանի Էրեբունի բժշկական կենտրոնում նորոգել է բաժանմունքներ, Արմավիր քաղաքում բացել է մանկական սննդի գործարան, Լուսակերտում, Գեղասարում, Գոգարանում կառուցել է մշակութային կենտրոններ, իրականացնում է աղետի գոտու դպրոցների օգնության ծրագիր: Ունի բարեգործական դեղատներ: Հավանավորում է հաշմանդամ երեխաների ծմբռային ճամբարը Ծաղկաձորում:

**«SOS Արմենի»**, բարեգործական կազմակերպություն, հիմնվել է 1988-ի դեկտեմբերի 7-ին՝ Փարիզի շրջակայքի կրոնական ընկերակցության նախաձեռնությամբ՝ Սպիտակի երկրաշարժից տուժած հայրենակիցներին օգնելու նպատակով: Ունեցել է իր վարչական խոհուրդը (նախագահ՝ Գյուտարք. Նազգաշյան): Հայաստան է ուղարկել մեծ քանակությամբ դեղորայք, սննդամթերք, հագուստ: Սպիտակում կառուցել է մանկապարտեզ, 4 բնակելի շենք, նորոգել բժշկական բաժանմունք-

ներ: «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆ-ի մասնաճյուղի ստեղծումից հետո. 1994-ի մարտի 31-ից կազմակերպությունը դադարել է գործելուց:

**Հայ գործարանների ֆորում**, միջազգային կազմակերպության Փարիզի մասնաճյուղ, գործում է 1992-1993-ից: Նպատակն է նպաստել Հայաստանի տնտեսության զարգացմանը՝ առևտրի, դրամական ներդրումների, առևտրական գրասենյակների ստեղծման, տնտեսագիտական կրթության կազմակերպման, փորձագետների պատրաստման միջոցով:

**«Լիոն և Երևան» համագործակցական ընկերակցություն** ստեղծվել է 1993-ին, Լիոնում: Նախագահ՝ Արտուր Տերտերյան (1996-ից): Ունի աշխատանքային 4 խումբ՝ մշակութային, տնտեսական, երիտասարդական, հաղորդակցության: Նպատակն է խթանել կապերը երկու քաղաքների մասնագետների միջև, համագործակցել տնտեսական, կրթական, առողջապահական բնագավառներում: Կազմակերպությունն ընդունել է ուսանողներ Հայաստանից, ուղարկել ֆրանսերեն գրականություն Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան և Հայաստանի Ազգային գրադարան: Լիոնում կազմակերպել է հայկական համերգներ, հայ արիեստավորների գործերի ցուցահանդես և վաճառք:

**ԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Ֆ – ի հայերն աչքի են ընկել նաև գիտության տարբեր բնագավառում: Լեզվաբան Շահան - Հակոբ Ջրպետյանը (1772 - 1837) եղել է Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցի հայագիտության ամբիոնի առաջին վարիչ: Լինելով հայագիտության հիմնադիրներից մեկը Ֆ-ում՝ նա որոշակի դեր է կատարել Եվրոպայում հայոց լեզուն ուսումնասիրելու և հայագիտությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում որպես առանձին գիտական առարկա դասավանդելու գործում: Հրատարակել է 16 անուն աշխատություն՝ մեծ մասամբ ֆրանսերեն՝ ծանոթացնելով եվրոպացիներին հայ ժողովրդի պատմությանն ու մատենագրությանը:

Հայ մատենագրությունը եվրոպական գիտությանը ներկայացնելու ուղղությամբ մեծ գործ է կատարել մշակութային և եկեղեցական գործիչ Կարապետ վրդ. Շահնազարյանը (1814-65): 1855 – ին Փարիզում հիմնել է տպարան, «Շար հայ պատմագրաց» մատենաշարով, հրատարակել հայ պատմիչների

երկեր: Ֆրանսերեն է թարգմանել Ղևոնդի «Պատմությունը» (1856): Ընտրվել է Փարիզի արևելյան գիտական ընկերության անդամ: Գրականագետ Կարապետ (Շառլ) Տետեյանը (ծ. 1910) 1949-ից եղել է Սորբոնի համալսարանի համեմատական գրականության ամբիոնի վարիչ, 1977 - ին՝ պատվավոր

պրոֆեսոր: «Պատերազմ մարդկանց ցավի մեջ» (1971, ֆրանսերեն) աշխատության մեջ նա անդրադարձել է Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպին և Հայոց ցեղասպանությանը: Եղել է ֆրանսիական «Կլարտե» հանրագիտարանի գլխավոր խմբագիրը: Արժանացել է ֆրանսիական ակա-



դեմիայի «Մեծ մրցանակին», ինչպես նաև «Ֆրանսիական միտք» և «Ֆրանսիական ճառագայթ» մրցանակներին:


Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, աստղագետ Հակոբ Թերզյանը (ծ. 1927) երկար տարիներ եղել է Լիոնի աստղադիտարանի փոխտնօրեն: Հայտնաբերել է 12 գնդաձև աստղակույտ, որոնք կոչվել են իր անունով: Միջազգային աստղագիտական միության (1964), Ֆ-ի աստղագետների ազգային միության (1964) անդամ է: Արժանացել աստղագետների միության Հենրի Ռեյի (1977), Ֆ-ի կրթության նախարարության (1979, 1994) մրցանակներին, Ֆ-ի ԳԱ պսակավոր դափնեկրի տիտղոսին (1988):

